

ԿԿՈՒ
ՄԱՆԿԱԴԱՍԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



ԹԻՒ 9
ՓԵՏՐՈՒՄ Գ. 2019

ՎԱՐԴԱՆԱՆՔ

428-ին Արտաշես Գ.-ի գահընկեցութեամբ վերջ գտաւ Արտաշեսեան հարստութիւնը, մեր երկիրը կառավարուեցաւ պարսից Շահին կողմէ նշանակուած մարզպաններով (կառավարիչներով): Այս տիրապետութիւնը տիրեց մինչեւ 441 թուական: Պարսիկ կրօնամուլ Շահը Յազկերտ խորհեցաւ, որ հայոց նման խելացի ժողովուրդ մը եթէ պարսիկ զրադաշտականութեան, այսինքն կրակապաշտութեան կրօնին դարձնել յաջողի, շատ դիւրաւ կը յաջողի նաեւ հայերը պարսիկ դարձնել:

Յազկերտի հրովարտակը եւ Արտաշատի ժողովը
Յազկերտ նամակ մը գրեց հայոց կաթողիկոսին եւ աւագանիին (երկրի մեծերուն): Կաթողիկոսը երկրի կրօնական եւ աշխարհիկ մեծամեծները Ազգային ժողովի մը կանչեց Արտաշատի մէջ, հոն կարդացուեցաւ այդ նամակը, ուր թագաւորը կը յայտնէր թէ հայերը պետք է ուրանան քրիստոնէական կրօնը եւ դառնան զրադաշտականութեան:
Հայերը հետեւեալ պատասխանը գրեցին Յազկերտին.
- Մեր կրօնքն մեզ ոչ ոք կրնայ հեռու պահել, ո՛չ կրակը, ո՛չ տանջանքը, ձեր սուրը՝ մեր պարանոցը:

Վարդանի կեղծ ուրացումը եւ վերադարձը
Այս նամակը առնելով, պարսից արքան շատ կը նեղուի, անմիջապէս նախարարներ Տիգրան (Պարսկաստանի մայրաքաղաքը) կը կանչէ խորհրդակցութեան մը համար:
Նախարարները չկրցան համոզել որ Յազկերտ ետ կենայ իր վտանգաւոր ծրագրէն, բայց իրենք ալ այլեւս չէին կրնար ազատիլ, ինկած էին ծուղակը:
Յազկերտ կը սպառնայ արքային բոլոր այդ նախարարները եւ Հայաստանը տակնուվրայ ընել, եթէ անոնք քրիստոնէութիւնը չուրանային: Այս նախարարներուն մէջ էին Վարդան Մամիկոնեան, Վահան Ամատունի, Վասակ Սիւնի, ինչպէս նաեւ ուրիշ շատ մը նախարարներու հետ դեռ պատանի նախարար մը, որ Յազկերտի խօսքերէն վիրաւորուած կը բողոքէ, բայց վայրագօրէն կը սպաննուի տեղւոյն վրայ իր համարձակութեան համար:
Նախարարները երկար մտածելէ ետք, կ'որոշեն երեսանց ուրանալ իրենց կրօնը եւ անմիջապէս վերադարձին Յազկերտի հաշիւը փակել:
Նախարարներու ուրացումին լուրը արդէն հասած էր Հայաստան, մեր ժողովուրդը առանց տեղեակ ըլլալու անոնց որոշման՝ կը պատրաստուէին նոյնիսկ զանոնք չընդունիլ երկիր, բայց երբ իմացան, որ անոնք Աւետարանի վրայ երդում ըրած էին անմիջապէս իրենց հայրենակիցներուն միանալու, քաջալերուեցան եւ մեծ հայրենասեր եւ աննման կղերական Վանանդեցի Դեոնդ Երեցի առաջնորդութեամբ յարձակեցան Անգղ գիւղի եկեղեցին իրենց ատրուշաններով սրբապղծող պարսիկ մոզերու վրայ եւ զանոնք հայկական սուրբ հողերէն դուրս դրին:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻԹԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇԻՇԵԱՆ

ԱՅՍՕՐ ԱԼ ՎԱՐԴԱՆՆԵՐ ԿԱՆ

Ճիշդ է որ Վարդան Մամիկոնեան նահատակուեցաւ, բայց թշնամին հասկցաւ որ հայը ուրիշ ազգերու չի նմանիր, կարելի չէ անոր մէջէն վերցնել իր հաւատքը, որուն համար ան նոյնիսկ իր ընտիր քաջերով հողը կը գրկէ:

Աւարայրէն առաջ ու մանաւանդ Աւարայրէն վերջ հազարաւոր հայ հերոսներ իրենց արիւնով ներկած են Հայաստանի սուրբ հողը: Ենթարկուած ենք ամէն տեսակ չարչարանքներու, հալածանքներու, տարագրուած ենք աշխարհի չորս կողմը, բայց միշտ հպարտութեամբ կ'ըսենք, որ ունեցած ենք Վարդաններ, Ղեւոնդներ:

Այսօր պատիւ կը զգանք ըսելու որ մենք արժանի գաւակն ենք Վարդանի, բայց պիտի ջանանք այս պատիւը միշտ բարձր պահել:

Այսօր մեզմէ իրաքանչիւրին մէջ կայ Վարդան մը: Մեզմէ իրաքանչիւրը պետք եղած պարագային կը դառնայ կարմիր վարդան մը:

ԳՈՂԹՆԻ ՔՆԱՐ

Գ. Վ. Սրուանձտեանց

Թէ հայրենեաց պսակադիր
Գողթնի քնարք լռեր են,
Երկնից թող գան անմահ հոգիք,
Հայոց քաջեր պսակել:

Մասեաց գագաթն թող գան բազմին,
Երկնից գունդ գունդ հրէշտակներ,
Աստուած իջեր ի Հայաստան,
Հայոց արիւնն ողողել:

Փախէք ամպեր ճաւարշանէն,
Ալ մի ցողէք ձեր ցողեր
Ճաւարշանը ոռոգուած է,
Հայոց քաջաց արիւնէն:



Ներկէ՛ նախասիրած
գոյներովդ:

ՎԱՐԱԳԻՆ ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐԸ

Չանի Շահինեան-Մեսրոպեան

Վարդանանց տօնն էր, Վարագ եւ դասընկերները Քաջ Վարդանին գլխարկը գլուխին՝ մտիկ կ'ընէին ուսուցչուհիին, որ կը պատմէր:

- Շա՛տ տարիներ առաջ պարսիկները ուզեցին, որ հայերը մոռնան քրիստոնէութիւնը եւ պարսիկ դառնան: Հայերը մերժեցին, եւ Վարդան Մամիկոնեան առաջնորդեց հայկական բանակը դէպի պատերազմի դաշտ: Աւարայրի դաշտին վրայ հայերը քաջօրէն պատերազմեցան պարսիկներուն դէմ եւ յաղթեցին: Այս պատճառով մենք հայ մնացինք ու եկեղեցի կ'երթանք: Մենք բոլորս Քաջ Վարդանի թռչներն ենք եւ իրեն պէս քաջ...:

Աշակերտները բարձրաձայն կը պոռան.

- Այո՛, հա՛յ եմ ես, հա՛յ եմ ես,
Սարսափեցե՛ք իմ ձեռքես,
Հայաստանը ազատող

Քա՛ջ Վարդանի թռոն եմ ես:

Ուսուցչուհին կ'ըսէ. «Ապրի՛ք, փոքրիկներ, հիմա շնորհաւորենք մեր դասընկերոջ՝ Վարդանի անունը եւ ըսենք՝ անուն՝ վո՛ւ ապրիս»: Վարդան շատ ուրախ էր, ինքն էր այդ օրուան հերոսը: Աշակերտները ուսուցչուհիին կը խնդրէն, որ իրենց անուններուն բացատրութիւնը տայ:

Ուսուցչուհին կը շարունակէ.

- Բոլոր հայերուն մէծ հայրը Հայկ Նահապետն էր, Հայկ շատ քաջ հսկայ մըն էր, որ կ'ուզէր ազատ ապրիլ: Ան կ'առնէ իր ընտանիքը, ազգականներն ու բարեկամները եւ կ'երթայ գեղեցիկ լեռնային երկիր մը, որ հետագային կոչուեցաւ Հայաստան, իսկ ժողովուրդը՝ հայ:

Արամ Նահապետ քաջ հայ մըն էր, ան կը պաշտպանէ իր հայրենիքը՝ Հայաստանը, կը պատերազմի եւ կը յաղթէ բոլոր թշնամիներուն: Արամ Նահապետին անունով օտարները մեզ «Արմէն» կը կոչեն, իսկ մեր հայրենիքը «Արմենիա»:

Հայկ, Արամ, Արմէն հպարտօրէն կը ժըպտին:

- Հայ ժողովուրդը ունեցած է նաեւ ուրիշ շատ քաջեր, ինչպէս՝ Արա գեղեցիկ, վիշապներու հետ կռուող Վահագն, առիծը ձեռքով սպանող Առիւծ Միեր, անվախ Սասունցի Դաւիթ:

Արա, Վահագն, Միեր եւ Դաւիթ գոհունակ իրարու կը նային:

- Այս քաջ հերոսներէն ետք հայերը ունեցան թագաւորներ, ինչպէս՝ Պարոյր, Տիգրան, Լեւոն, Աշոտ, Արշակ...:

Դասարանին մէջ այս անունները ունեցող աշակերտները կը պոռան. «Մենք թագաւոր ենք...»:

(շարունակելի)



ԱՄԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ



Հայոց բանակի մեծամեծները արդեն լուր առած էին պարսկական զորքերու կեդրոնացումն: Արդարեւ՝ Չատիկէն վերջ 451 թուի գարնան Յազկերտ 300000 պարսիկ զինուորներով իր բանակը դրկեց Հայաստանի վրայ: Այս հսկայ բանակը զօրացած էր վիթխարի փիղերով, զորս պարսիկները յատկապէս այս պատերազմին համար Հնդկաստանէն բերած էին: Պարսիկ բանակներու ընդհանուր հրամանատարն էր, սպարապետ Մուշկան Նիսաւաւուրտ:

Պարսկական բանակը արդեն հասած էր հայ պարսկական սահմանագլուխներուն վրայ գտնուող Հեր եւ Չարեւանդ գաւառները ուրկէ, լուր առնելով հայ բանակներու պատրաստութեան անմիջապէս անցան հայկական Արտազ գաւառը եւ Աւարայրի գիւղի մօտ Տղմուտ գետի միւս ափին սպասեց հայկական բանակին:

Առաւօտեան արշալոյսին հետ պարսիկները նետերու տարափ մը սկսան թափել հայ զինուորներուն վրայ, որոնց թիւը 66000-ի կը հասներ, բայց հայերը աւելի մեծ յանդգնութեամբ ետ մղեցին անոնց յարձակումը: Հայոց սպարապետը իր ձիուն վրայ անդադար հոս ու հոն կը փութար զինուորները քաջալերելու եւ միւս կողմէն կը հետապնդէր պարսկական բանակը, որոնք սարսափահար Վարդանի քաջութենէն՝ կը փախչէին:

Աւարայրի խաղաղ եւ կանաչ դաշտը վերածուած էր դժոխքի: Հակառակ անոր որ Վարդան փախուստի կը մատներ թշնամի ուժերը, հայկական բանակի մէկ թիւը կը տկարանայ, Վարդան անմիջապէս օգնութեան կը փութայ հոն բայց ինքզինքը կը գտնէ երկու կրակի մէջ: Առջեւէն՝ պարսիկ թշնամին, իսկ կռնակէն երդումնադրուած եւ դաւաճան Վասակ Սիւնին: Անոր ուրիշ բան չէր մնար ընել այս դժուար եւ անել կացութեան առջեւ, եթէ ոչ կամ անձնատուր ըլլալ եւ ազատիլ, ինչ որ վախկոտներու գործ է, եւ կամ քաջաբար դիմադրել, նահատակուիլ պատերազմի դաշտին վրայ: Վարդան եւ իր ընկերները ահա այս երկրորդ միջոցին դիմեցին եւ ինկան հերոսներու մահով իրենց սուրբ արիւնով ներկելով Աւարայրի դաշտը:

Այս ճակատամարտին հայոց նահատակներու ընդհանուր թիւը հասաւ 1036 հոգիի, իսկ պարսիկներունը՝ 3544 հոգի եւ 9 զօրապետ:

Իսկ ի՞նչ եղաւ Վասակ Սիւնի

Պատերազմէն վերջ Վասակ Սիւնի անմիջապէս Տիգրան կանչուեցաւ Յազկերտի կողմէ եւ իբր պատասխանատու այսքան կոտորածի, բանտ առաջնորդուեցաւ:

Բանակին մէջ Վասակ այլեւս չէր կրնար հայկական գահը երազել, որովհետեւ իր խիղճը զինք կը տանջէր: Թշուառ վիճակի մէջ մեռաւ ան:

Այս է վախճանը բոլոր ազգուրացներուն եւ դաւաճաններուն, որոնք կ'ուրանան իրենց հայրենիքն ու սրբութիւնները: